27 ՆՈՅԵՄԲԵՐ 1996. ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 225 (1231)

Azg
Azg
armenian daily

Դեմ ԵԱՀԿ գագաթաժողովի Թուրքիայում գումարմանը

ՆԻԿՈՍԻԱ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՈՐՍ ՏԵՐ-ԳԱՐԹՈՒՆԻ. ԵԱՀԿ-ի գծով Ս. Նահանգների Կոնգրեսի հանձնաժողովը հրապարակեց Հելսինկյան հանձնաժողովի կողմից նոյեմբերի 22-ին պետքարտուղար Քրիստոֆերին ուղղված նամակ, ուր դեմ է կանգնում ԵԱՀԿ-ի հաջորդ գագաթաժողովը Թուրքիայում անցկացնելու վերջինիս նախաձեռնությանը. Հանձնաժողովի նախագահ Քրիստոֆեր Սմիթի (Նյու Ջերզի) եւ համանախագահ Ալֆոնսո Դ'Ամատոյի (Նյու Յորք) կողմից ստորագրված նամակը Ս. Նահանգներից պահանջում է պաշտոնապես մերժել հեսագա բոլոր գագաթաժողովների հյուրընկալման Թուրքիայի բիկնածությունը, մինչեւ որ այդ երկիրը չբարելավի մարդու իրավունքների հարգման իր վիճակը. Նամակում Հելսինկյան հանձնաժողովը որպես գլխավոր առաջարկություն առաջ է քաշում թուրքական զինված ուժերի կողմից Կիպրոսի տարածքի մի մասի անօրինական գրավման փաստը. «ԵԱՀԿ-ի գագաթաժողովը հյուրընկալելու թուրքական ցանկությունը պետք է համարժեք լինի նրա կողմից մարդու իրավունքների հարգմանը եւ Կիպրոսից իր զինված ուժերը դուրս բերելուն», եզրակացնում են նամակագիրները.

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

«Բանակցությունները կշարունակվեն, անգամ եթե Հայաստանը օգտագործի վետոյի իրավունքը»

ՏԻՊՈՒՆ ՄԱՍՍԻՍՅԱՆ.

«Մենք հիասթափված ենք Հելսինկիում տեղի ունեցած բանակցությունների ընթացքից», այսպես սկսեց իր երեկվա ասուլիսը ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, ամփոփելով Հելսինկիում տեղի ունեցած բանակցությունների ընթացքը.

Նրա ասելով, հայկական կողմին է տվել մի փաստաթուղթ, որում նշված էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը. Միեւնույն ժամանակ, որեւէ որոշում պարտադրելու փորձերը չեն կարող հաջողությամբ պսակվել, քանզի, ըստ արտգործնախարարի, ցանկացած որոշում պետք է համաձայնեցվի եւ ընդունվի վոխազիջման ճանապարհով: Լեռնային Ղարաբաղը դեմ է կարգավիճակի հարցը կանխապես դնելու ցանկացած փորձերի», ասաց նա.

«Մենք չենք ընդունում, որ Ադրբեջանի վրա ենք պարտադրում, այլ նախարարը, բայց ԼՂՀ-ի կողմից վոխզիջման այն է, որ նա պատրաստ է ճանաչելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, այդ բվում Ադրբեջանի մասնակցությամբ: Իսկ որպես բանակցությունների սկսման սկզբնական կարգավիճակ կարող է ծառայել այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս չի կազմում: Ինչ վերաբերում է բանակցային ընթացքին, ապա թեեւ Լեռնային Ղարաբաղը որպես չճանաչված պետություն չի կարող մասնակցել Լիսաբոնի գագաթաժողովին, սակայն նախարարը հույս հայտնեց, թե Հայաստանը կանի հնարավոր ամեն ինչ Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու համար: Այն հարցին, թե ինչ կլինի, եթե Հայաստանը օգտագործի վետոյի իր իրավունքը, Արկադի Ղուկասյանը նշեց, թե ոչինչ անհավոր տեղի չի ունենա, կշարունակվեն բանակցությունները, բայց ողղակի անհարաժեշտություն կա մեծացնելու դրանց ֆորմատը: Իսկ թե ինչ պատասխանեց, եթե կիրառվել, ԼՂՀ արտգործնախարարը համարված պատասխանեց. «ոչ մի», քանի որ բոլորը հասկանում են Լեռնային Ղարաբաղի բերած փաստարկների արդարությունը: Եվ, բացի այդ, օբյեկտիվ պատճառ չկա ռազմական գործողությունների վերսկսման համար, շեշտեց նա:

Չբացառելով տարբերակների առկայությունը, Արկադի Ղուկասյանը միեւնույն ժամանակ նշեց, թե Լեռնային Ղարաբաղը բանակցությունների ընթացքում պետք է ճանաչվի որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:

ԼՂՀ արտգործնախարարը հաստատեց նաեւ, որ Հայաստանի ներքաղաքական իրավիճակն իրոք նոյասեր է Ադրբեջանի դիրքորոշման խստացմանը:

Արկադի Ղուկասյանը պատասխանելով հարցերից մեկին, հայտարարեց, որ եթե Ադրբեջանը բարձրացնում է ԼՂՀ նախագահի ընտրություններում վախասական ադրբեջանցիների հարցը, ապա Ղարաբաղն էլ կարող է բարձրացնել Ադրբեջանի նախագահի ընտրություններում կնամիլոնանոց հայ համայնքի մասնակցության հարցը.

ՍՐՅԱԳԱՆՔԵՐ

ՈԳ ԱԳՆ հավաստել է զարաբաղյան հակամարտության կարգավորման իր ջանքերը

ՍՈՍԻԼԼ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆ ԳՈՐԵՍ. ՈԳ արտգործնախարարության տեղեկատվության եւ մամուլի գերատեսչության տնօրեն Գենադի Տարասովը նոյեմբերի 26-ին կայացած ճեղագրույցի ժամանակ Լեռնային Ղարաբաղում կիրակի օրը կայացած ընտրությունները համարել է «Ստեփանակերտի իշխանությունների ինքնակամ արարք»: Դիվանագետի խոսքերով, այդ ընտրություններին մի ոչ մեծ խումբ անձանց, այդ բվում՝ առաստանցիների ներկայությունը, որոնք իրենց միջազգային դիտորդներ են կոչել, «բացարձակապես ոչինչ չի փոխում»: «Դա չի կարող նոյեմբերի 24-ին անցկացված միջոցառումը որեւիցե օրինական բնույթ տալ, քանի որ այն հակասում է մարդու հանրաճանաչ իրավունքներին, հիմնական քաղաքացիական ազատություններին», ընդգծել է Գենադի Տարասովը: «Ստիպված ենք ցավով արձանագրել, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, նշել է պաշտոնական ներկայացուցիչը, որ Ստեփանակերտում փոխանակ բանակցություններ վարեն Ադրբեջանի տարածային ամբողջականության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի իսկական ինքնակառավարման հուսախաբված բարձր ասիճան ստանալու շուրջ, լրացուցիչ խոչընդոտներ են հարուցում բանակցությունների գործընթացի ճանապարհին:

Այդուամենայնիվ, չնայած իրադրության բարդացմանը, Ռուսաստանի արտգործնախարարությունը հավաստում է առաստանյան կողմի պատրաստակամությունը՝ շարունակելու միջնորդական ջանքերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուտափույթ կարգավորման հասնելու նպատակով», հայտարարել է Տարասովը.

Ադրբեջանի ԿԸՀ-ն վիճարկում է ԼՂՀ նախագահական ընտրությունները

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆ ԳՈՐԵՍ. Նոյեմբերի 25-ին տեղի է ունեցել Ադրբեջանի խորհրդարանի կառուցվածքում գործող այդ երկրի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստը, որի ժամանակ ինքնակամ ՀՀՇ-ում կայացած նախագահական ընտրությունների «իրավական հիմքերը» ՀՀՇ լրատվական կենտրոնից հաղորդեցին, որ Ադրբեջանի ԿԸՀ-ն հայտարարություն է տարածել, որում մասնավորապես ասվում է, թե իբր հայ անջատողականները ԼՂՀ բնակիչների 1/3-ին տեղահանելուց հետո իրավական հիմք չունեն այդ միջոցառումը հանդիսանալ նախագահական ընտրություններ: Հայտարարությունը ներկայացվել է ԱՄԿ-ին, ԵԱՀԿ-ին, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովին եւ այլն.

ԱՄՆ-ում վերսկսվում է Հայ եկեղեցու միության աշխատանքը

Ավելի քան է տարվա ընդմիջումից հետո, Հայ եկեղեցու Ս. Նահանգների միության հանձնախումբը այս ամսվա վերջերին կրկին նիստ է գումարելու Նյու Յորքում, տեղեկացնում է ՈԱԿ անգլիալեզու «Արմենիան Միրոր Սփեյթեյթր» բաբաքաթերթը Բոստոնից: Նիստին մասնակցելու են Հայ եկեղեցու Արեւելյան Ամերիկայի թեմի (էջմիածնական) եւ անջատյալ եկեղեցու (Անթիլիասյան թեմ) ներկայացուցիչները: Այդ հանձնախումբը գոյություն ունի արդեն 20 տարի: Նրա գլխավոր ու միակ նպատակն է Ամերիկայում քաղաքական պատճառներով բաժանված մեր թեմերի միջեւ առկա իրավաբանական եւ այլ կարգի տարբերությունների համահարթեցումը: Բայց նրա աշխատանքները եղել են ապարդյուն: Սակայն վերջին ժամանակաշրջանում արձանագրված նոր իրողությունները սաթ պատերազմի ավարտ, Մեծի տանն կիլիկիո կաթողիկոսի ընտրություն որպես Ամենայն հայոց հայրապետ, թվում է՝ հարմար պետք են ստեղծել եկեղեցու վերամիավորման շուրջ լուրջ խոսակցության համար: Եվ արդեն, ինչպես գրում է «Միրոր Սփեյթեյթրը», Գարեգին Ա կաթողիկոսի ընտրությանը ցույց տրված մեծ աջակցությունը պայմանավորված էր Հայ եկեղեցու վերամիավորումը իրականացնելու գործում նրա անձի հետ կապված հույսերով: Եկեղեցու միությանն ընդառաջ հայտ է կատարվել արդեն Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի «Հովվական թղթով», որտեղ նա թույլատրել է իր իրավասության տակ գտնվող եկեղեցիներում անթիլիասյան եկեղեցականների ծիսակատարությունների մասնակցությունը: Թերթն ավելացնում է, որ Ամերիկայի բազմաթիվ եկեղեցիներում հուսախաբություն է տիրում, որ Անթիլիասի նոր կաթողիկոսը՝ Արամ Ա-ն, դեռեւս պատրաստ եւ բաց ասած կերպով չի ճանաչել էջմիածնի Մայր աթոռի գերակայությունը:

Արգենտինահայերը կոժանդակեն Լեռնային Ղարաբաղի եւս 1 գյուղի

ԼՂՀ Վաղուհաս գյուղի վերականգնման աշխատանքների իրականացումն ստանձնել է արգենտինահայ հանձնախումբը: Բուենոս Այրեսում կազմակերպված հանգանակության համար հավաքվել է 240 հազար դոլար: Իմանալով, որ ԼՂՀ նախագահական ընտրությունները կայացել են եւ Ռոբերտ Քոչարյանը ընտրվել է նախագահ, հայտարարել են, որ ԼՂՀ եւս մեկ գյուղի օժանդակություն են ստանձնում.

Ստամբուլում Այվազովսկու նկարը վաճառվեց 47,5 հազար դոլարով

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊՈՆ. «Անտիկ» ընկերության կողմից նոյեմբերի 24-ին Ստամբուլում կազմակերպված աճուրդի ընթացքում Հովհաննես Այվազովսկու նկարը վաճառվել է 4 միլիարդ 750 միլիոն բուրգայի լիրայով (մոտ 47,5 հազար դոլար): Աճուրդում առավելագույն գնով վաճառվել է 18-րդ դարի «Բեռնակիր» աղոնը կրող յուղանկարը՝ 13 միլիարդ լիրայով: Թուրքիայում լույս տեսնող «Ռադիոնը կրող յուղանկարը՝ 13 միլիարդ լիրայով: Թուրքիայում լույս տեսնող «Ռադիկալ» թերթը հարցազրույց է հրապարակել աճուրդի կազմակերպիչ, հայազգի հայտնի հնագետ եւ արվեստաբան Ռաֆֆի Փորքահի հետ, ըստ որի արվեստաբերները հետաքրքրություն են ցուցաբերում հիմնականում յուղաներկերի եւ օսմանյան շրջանի արվեստի գործերի նկատմամբ.

Ալեքսանդր Լուկաշենկոն կազմավորեց նոր խորհրդարան

26 ՆՈՅԵՄԲԵՐ. VOA. RFL. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն կազմավորելով նոր խորհրդարան եւ նոսխկին Պերազոյն խորհուրդ լուծարելով հաղթական իր ոգեկիցներին զրկեց իշխանությունից.

Հարյուրից ավել օրենսդիրներ հանձնաժողովեցին անցնել նախագահի նամբարն այն ժամանակ, երբ շուրջ 60 ընդդիմադիր պատգամավորներ հանձնում են, փորձելով սկսել նախագահին պատասխանատվության գործընթաց: Բելառուսի Սահմանադրական դատարանը որոշեց չքննել այսօր նախագահ Լուկաշենկոյին պատասխանատվության ենթարկելու հարցը: Ընդդիմության ներկայացուցիչներն ու միջազգային առաջ դիտորդներ կիրակի նոյեմբերի հանրաքվեն ոչ լեգիտիմ են անվանում, իսկ Ալեքսանդր Լուկաշենկոն ազդարարեց՝ հանդիսանում է ունեցած մեծ հաղթանակը: Եվրամիությունը Բելառուսի նախագահին հորդորեց «հնարավոր ամենասեղմ ժամկետներում հարգել Սահմանադրական դատարանի վճիռն այն մասին, որ հանրաքվեի արդյունքները պետք է պարտադիր չլինեն»: Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակ Գենադի Կարասյովն այսօր հայտնեց, որ Մոսկվան Բելառուսի ներքին խնդիրն է համարում հանրաքվեի արդյունքներն ընդունել չընդունելու հարցը: Միացյալ Նահանգները եւս դատապարտեց հանրաքվեն: Լուկաշենկոյի հաղթանակը բնութագրելով որպես օրինականություն զուրկ.

ԹՈՒՐՔ

Թոշակառու դարձած թռչները կօգտվե՞ն իրենց պապերի եւ տատերի միջոցներից

26 ՆՈՅԵՄԲԵՐ, BBC, RFL VOA. Վիկտոր Չեռնոմիրդինը պատասխանական այցով ժամանեց Ֆրանսիա: Ինչպես տարածվում է, նրա բանակցությունների օրակարգի հարցերից մեկը կլինի գարական Ռուսաստանի արտաքին պարտքերի հարցը: Սինչեւ Ֆրանսիա մեկնելը Չեռնոմիրդինն ասաց, թե Ռուսաստանը հավանաբար է մարել գարական պարտատոմսերի իր պարտքը: Գարական իշխանությունները այդ փոխառությունը բաց էին թողել հիմնականում տրանսֆերային երկաթուղային մայրուղու կառուցման համար: Շուրջ 30 միլիոն գարական փոխառության պարտատոմսեր էին այն ժամանակ գնվել Ֆրանսիայում, հիմնականում համեստ կարողության տեր մարդկանց կողմից, որոնք ծրագրում էին աշխատանքային գործունեության ավարտից հետո ապրել փոխառության պարտատոմսերից ստացված տոկոսների հաշվին, քանի որ այն ժամանակ դեռեւս գոյություն չուներ բուսակների հավակարգը: Հեղափոխությունից հետո Լենինը հրաժարվեց մարել ցարական պարտքերը: Այժմ Ֆրանսիայում շուրջ 400 հազար մարդ կա, որոնց ձեռքին 4 միլիոն արժեթուղթ կա: Նրանք, հաշվի առնելով 80 տարվա ընթացքում կուտակված տոկոսները, յուրաքանչյուր պարտատոմսը գնահատում են 42 հազար Ֆրանկ: Սակայն Ռուսաստանը դժվար թե կարողանա վճարել այդքանի գումարներ, եւ պարտատոմսերի տերերի տարբեր միավորումների կարծիքով դրանց հանձնվող գինը դժվար թե 400 Ֆրանկից անցնի: Չեռնոմիրդինի հայտարարությունն անհանգստություն առաջացրեց Ռուսաստանում: Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովն ասաց, որ Ֆրանսիայի բնակիչների պարտքերի վարումը նախադեպ կստեղծի եւ որեւէ երկրներից էլ նման պահանջներ կլինեն: Անցյալ տարի Ֆրանսիան արգելեց ռուսական գործարքներ կատարել ռուսական նոր փոխառության պարտատոմսերի հետ, որոնք 17 բվանշից ի վեր Ռուսաստանն առաջին անգամն է ներկայացրել վաճառքի.

ԱԶԳ

ՊՐԱԳԻԿ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒԱԿ-ը շնորհավորում է Ռոբերտ Քոչարյանին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորընտիր նախագահ
ողն Ռոբերտ Քոչարյանին
Մեծարգո պարոն նախագահ

Ընդունեք մեր ջերմ շնորհավորանքները, անկեղծ եւ բարի ցանկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի ընտրվելու կապակցությամբ:

Համաժողովրդական աքցությունը եւ միասնության պայմաններում անցած ընտրությունները եւ նրանց արդյունքները մեկ անգամ եւս հաստատեցին, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հերոսական ժողովուրդը պաշտպանում է Ձեր վարած ներին եւ արտաքին քաղաքականությունը, որ նա մեկընդմիշտ ընտրել է ժողովրդավարության եւ արարման ուղին, խաղաղության գործընթացի եւ տարածաշրջանում կայունության ամրապնդման ուղին եւ պատրաստ է հանուն դրա դիմակայել բոլոր տեսակի խոչընդոտների եւ արտաքին ճնշումների:

Մենք համոզված ենք, որ Դուք, մեծարգո պարոն նախագահ, արժանանալով համաժողովրդական վստահության խիստ, ավելի վճռականորեն եւ հմտորեն կշարունակեք Ձեր ազգանվեր եւ հայրենանվեր մեծ գործը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հերոս-ժողովրդին ի դեմս Ձեզ ցանկանում ենք տոկունություն, արիություն եւ նորանոր հաջողություններ:

ՀՈՒԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՈՒՆՈՒԹՅՈՒՆ
Ք. Երեւան

ՀՈՒԱԿ անդամների հաջողությունը տեղական ընտրություններում

Տեղական ինքնակառավարման մարմիններում ավագանու կազմում ընտրվելու համար ՀՈՒԱԿ ակումբներից եւ համակիրներից առաջադրվել էր (ինքնաառաջադրման կարգով) ութ մարդ:

Ընտրությունների արդյունքներով ընտրվել է 5-ը՝

1. Լավրենտի Միրզոյան (ՀՈՒԱԿ ՀՎ անդամ, ՀՅՍՍ ԿՎ անդամ)-Երեւան խաղաքաղաքի Էրեբունու համայնքի ավագանու անդամ,
2. Աշոտ Աստաֆյան (համակիր)-Երեւան խաղաքաղաքի Էրեբունու համայնքի ավագանու անդամ,
3. Շաղալին Մարգարյան (ՀՈՒԱԿ ՀՎ անդամ)- Արմավիրի մարզի գյուղական համայնքի ավագանու անդամ
4. Վալերի Շաղունց (ՀՈՒԱԿ անդամ)-Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ավագանու անդամ
5. Համլետ Միրզոյան (համակիր)-Երեւան խաղաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ավագանու անդամ

Երվանդ Աղվանյանը՝ Էջմիածնի խաղաքաղաքագլուխ

Ձայների գերակշիռ առավելությամբ ՀՈՒԱԿ անդամ Երվանդ Աղվանյանը ընտրվել է Էջմիածնի խաղաքաղաքագլուխ:

ԵՐԵՎԱՆ

Ագրարայինները սատարում են ՀՀ վարչապետին

Հայաստանի ագրարային ժողովրդավարական կուսակցության (ՀԱԺԿ) նախագահությունը հանդես է եկել հայտարարությամբ, որով հանձնարարություն է տալիս հանրապետության կառավարության «սկզբունքային նոր մոտեցումներին» եւ արձագանքելով վարչապետ Արմեն Մարգարյանի հայտարարությանը իր պատրաստակամությունն է հայտնում համագործակցելու կառավարության հետ:

Հայտարարությունում, որի տեքստը մեզ տրամադրել է կուսակցության նախագահ Մելս Մկրտչյանը, նշվում է, որ ՀԱԺԿ-ում ծանոթացել են ՀՀ վարչապետի վերջին հայտարարություններին, որոնցում կառավարության ղեկավարը խոսում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, տնտեսական բարեփոխումների կուրսին նոր նոսնդ հաղորդելու, ժամանակակից մրցունակ արդյունաբերություն ու գյուղատնտեսություն ստեղծելու, ներքին ապրանքաշրջանառության շահերը պաշտպանելու, տարվող բարեփոխումները սոցիալապես վերակողմնորոշելու, վերջիններիս բաշխելության մեջ տեսնելու մասին: Դրանք հիմնականում համընկնում են այդ հարցերում ՀԱԺԿ-ի ծրագրային դրույթներին, նշվում է հայտարարության մեջ:

Ի պատասխան ՀՀ վարչապետ Արմեն Մարգարյանի հասարակաքաղաքական կազմակերպությունների հետ հանդիպելու պատրաստակամության մասին հայտարարությանը, ՀԱԺԿ-ն իր հերթին հայտարարել է, որ «պատրաստ է համագործակցելու կառավարության հետ, բայց ամենայնի աջակցելու սոցիալ-տնտեսական նորացվող քաղաքականության մշակմանն ու իրագործմանը, այդ գործին դնելով կուսակցության մարդկային ու մտավոր ողջ ներուժը»:

ՀԱԺԿ-ն առաջին քաղաքական կուսակցությունն է, որ արձագանքել է ՀՀ վարչապետի հայտարարությանը:

Տ. Լ.

ՀԱՄԱՌՈՏ

Գեղանկարների ցուցադրում-վաճառքը կիրականացվի Սարյանի արձանի մոտ

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԵՊԵՆ. Երեւանի քաղաքապետարանի առեւտրի եւ ծառայությունների բաժնից ստացած տեղեկության համաձայն, այսուհետ գեղանկարների ցուցադրում-վաճառքը, որ շաբաթ եւ կիրակի օրերին կատարվում էր Հանրապետության հրապարակին կից «Վերնիսաժ» կոչվող տարածքում, կիրականացվի Մարշալ Սարյանի արձանի մոտակայքում (նախկին «Վերնիսաժում»):

Հրազդան. Նոր աշխատատեղեր՝ հայ-չինական համագործակցությամբ

ՀՐԱԶԴԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայ-չինական «Ի մին» համատեղ ձեռնարկությունում 1997 թ. կտեղադրվի չինական ձիթիան սարքավորում, որի առաջադրանքությունն օրական 4 տոննա է: Այն կարտադրի կտավատի (վուշ) ձեթ, որը մեծ դատարկարկ ունի որպես բուժիչ յուղ: Նախատեսվում է նաեւ գործարկել մակարոնի, երշիկեղենի, համակցված կերերի արտադրամասեր, որը հնարավորություն կտա լուծել նոր աշխատատեղեր, Արմենուհի ֆոլոսկին տուաց ձեռնարկության համաձայնագրի Գալայանը:

Տանգիզման ընթացքում կողմերն անդրադարձան երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ավանդական հարաբերություններին, որոնք ամրապնդվեցին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Աբեթեք կատարած այցելության ընթացքում, ոլորտներում երկկողմ տնտեսական հարաբերությունների ներկա իրավիճակը, որն ամրագրված է համագործակցության տարբեր բնագավառներին վերաբերող տասնյակ համաձայնագրերով:

Քննարկումների ժամանակ կողմերը հաստատեցին, որ երկու երկրների միջեւ առեւտրական վիճակագրությունը, բանկերի եւ այլ հաստատությունների հիմնադրումը եւ այլն:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության կողմից Երեւանում հունական Ուսուցման եւ զարգացման կենտրոնի ստեղծման խնդիրը: Նշվեց, որ այդ կենտրոնը հիմք կհանդիսանա Հայաստանում հունական ներկայության աճխուժացման ճանապարհին, մասնավորապես հնարավորություն կտեղծվի կազմակերպել հունական արտադրանքների տեսակաձեւեր, հայ դասընթացների ուսումնական ծրագրերի, բանկերի եւ այլ հաստատությունների գործունեության դասընթացներ, բանկերի եւ այլ հաստատությունների հիմնադրման գործում:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Հունաստանի ազգային էկոնոմիկայի նախարարության կողմից Երեւանում հունական Ուսուցման եւ զարգացման կենտրոնի ստեղծման խնդիրը: Նշվեց, որ այդ կենտրոնը հիմք կհանդիսանա Հայաստանում հունական ներկայության աճխուժացման ճանապարհին, մասնավորապես հնարավորություն կտեղծվի կազմակերպել հունական արտադրանքների տեսակաձեւեր, հայ դասընթացների ուսումնական ծրագրերի, բանկերի եւ այլ հաստատությունների գործունեության դասընթացներ, բանկերի եւ այլ հաստատությունների հիմնադրման գործում:

Բանակցությունների ընթացքում կողմերը նշեցին Էներգետիկայի բնագավառում երկու երկրների համագործակցության որոշակի առաջընթացի առկայությունը մասնավորապես Եվրոպական միության, Եվրոպական եւ Համաշխարհային բանկերի ծրագրերում հունական ընկերությունների մասնակցության շնորհիվ:

Որոշակի դարձանավորություններ ձեռք բերվեցին տրանսպորտի, հաղորդակցությունների զարգացման բնագավառներում:

Կողմերը դրականորեն գնահատեցին երկու երկրների միջեւ հաստատված հարաբերությունները, որոնք ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջեւ բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ հասկացողության հռչակագրում:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայ-հունական տնտեսական հարաբերություններն ամրագրված են տասնյակ համաձայնագրերով

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԱԶԳ ՄԱՄՈՒԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. Աթենքում ավարտվեց Հայաստանի եւ Հունաստանի տնտեսական, արդյունաբերական, տեխնիկական եւ գիտական համագործակցության համատեղ միջկառավարական հանձնաժողովի հանդիպումը. Հանձնաժողովի հայկական կողմի նախագահն էր էկոնոմիկայի փոխնախարար Ա. Դարբինյանը, հունական կողմինը՝ ազգային էկոնոմիկայի փոխնախարար Ա. Քալքասը:

ման ծավալը վերջ է. 1995 թ. այն կազմել է ընդամենը 9 մլն ամերիկյան դոլար: Հունաստանի կողմից Հայաստանին տրամադրվող 10 մլն ամերիկյան դոլարի վարկը կավելացնի երկու երկրների միջեւ առեւտրի ծավալը, ինչպես նաեւ կբարձրացնի հունական ընկերությունների ներդրումային ակտիվությունը: Հաստատվեց երկու կողմերի շահագրգիռությունը այդ ծրագիրը կյանքի կոչելու նպատակով անհրաժեշտ բոլոր միջոցառումների արագ իրագործման համար:

Կողմերը ողջունեցին հայ-հունական առեւտրաարդյունաբերական պալատի գործունեությունը, ընդգծելով նրա կարեւոր դերը հայ եւ հույն գործարարների միջեւ կապերի հաստատման գործում:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Հունաստանի ազգային էկոնոմիկայի նախարարության կողմից Երեւանում հունական Ուսուցման եւ զարգացման կենտրոնի ստեղծման խնդիրը: Նշվեց, որ այդ կենտրոնը հիմք կհանդիսանա Հայաստանում հունական ներկայության աճխուժացման ճանապարհին, մասնավորապես հնարավորություն կտեղծվի կազմակերպել հունական արտադրանքների տեսակաձեւեր, հայ դասընթացների ուսումնական ծրագրերի, բանկերի եւ այլ հաստատությունների գործունեության դասընթացներ, բանկերի եւ այլ հաստատությունների հիմնադրման գործում:

Բանակցությունների ընթացքում կողմերը նշեցին էներգետիկայի բնագավառում երկու երկրների համագործակցության որոշակի առաջընթացի առկայությունը մասնավորապես Եվրոպական միության, Եվրոպական եւ Համաշխարհային բանկերի ծրագրերում հունական ընկերությունների մասնակցության շնորհիվ:

Որոշակի դարձանավորություններ ձեռք բերվեցին տրանսպորտի, հաղորդակցությունների զարգացման բնագավառներում:

Կողմերը դրականորեն գնահատեցին երկու երկրների միջեւ հաստատված հարաբերությունները, որոնք ամրագրվեցին Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջեւ բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ հասկացողության հռչակագրում:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էր Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Կիրակոսյանը:

«Դրոյի» դատավարությունը ավարտվեց, դատավճռի օրը դեռեւս հայտնի չէ

«Դրոյի» դատավարության վերջին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 26-ին: Դատավարությունը երեք ամսով ընդմիջելը նախագահողը բացատրեց իր հիվանդ լինելով: Այնուհետեւ դիմեց ամբաստանյալ Արմենակ Մնջոյանին՝ վերջին խոսքը լսելու համար: Ամբաստանյալը կրկին պնդեց, որ ինքը վերջինն է խոսելու, իսկ իրենից առաջ դեռեւս Թաքուր Գաբրիելյանը կա:

Ամբաստանյալ Թ. Գաբրիելյանը իրեն բանդայի անդամ լինելու մեջ մեղադրելը հիմնավորված չհամարեց: Նշեց, որ ո՛չ նախաքննությունը, ո՛չ էլ դատարանը առաջադրված մեղադրանքի վերաբերյալ ապացույցներ չեն կարողացել ներկայացնել: Ինքը բանդայի գոյության մասին ոչինչ չի իմացել, իսկ իրական գործում տեղ գտած իր միակ դիմումը Արցախ մեկնելու համար էր գրել, սակայն հետեւողական չի եղել նաեւ այդ հարցում: Ամբաստանյալը հայտնեց, որ պետական մեղադրողը հանցանքը հիմնավորող ապացույց չունենալով հանդերձ դատարանին լմիջնորդեց կալանքից ազատելու իրեն: Ընդհակառակը՝ 8 տարվա ազատազրկում պահանջեց: «Ինչպե՞ս եք պատրաստ ձեր մնացած կյանքը, քանի որ ես որեւէ հանցանք չեմ կատարել», ասաց նա պետական մեղադրողին, ապա դատական կոլեգիային դիմելով՝ խնդրեց անպարտ ճանաչել իրեն:

Այնուհետեւ իր ծավալուն վերջին խոսքն ընթերցեց ամբաստանյալ Արմենակ Մնջոյանը՝ հերքելով իրեն ներկայացված բոլոր մեղադրանքները: Դատական նիստի ավարտին նախագահողը հայտարարեց, որ դատական կոլեգիան անցնում է խորհրդակցական սենյակ՝ վճռահատման:

Ժամկետ չնշանակվեց, նախագահողը հայտնեց, թե դատավարության մասնակիցներին երեք օր առաջ կտեղեկացնեն վճիռն ընթերցելու մասին:

Ա. Պ.

Սուրբ խաչը՝ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու վրա

ՇՈՒՇԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Նոյեմբերի 25-ին մեծ հանդիսավորությամբ, օծմամբ եւ արարողությամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արտազանի, մասնակցությամբ ԼՂՀ վերնագրված նախագահ Ռոբերտ Քոչարյանի, վարչապետ Լեւոն Տեր-Պետրոսյանի, նախարարների, բազմաթիվ հյուրերի ու շուշեցիների ներկայությամբ Ղազանչեցոց եկեղեցու գմբեթին տեղակայվեց հոյակերտ խաչը: Այսուհետ 41 ընդհանուր եւ 17 ն բարձրությունն ունեցող գմբեթով եկեղեցու վրա կիսանկի սուրբ խաչը, որպես խորհրդանիշ արցախցու, ողջ հայության հավերժության:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Դուրս գալիս է 8 էջով
Գինը եւ հասցեները
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Կոմիտասի պող. 47
Տել՝ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / Հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / Հեռ. 562863
A-STYLE համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային ծառայություն «Ազգ» թերթի
Տպումը «Ազգին» պատկանող է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutyan st.
Yerevan, Armenia, 375010

13 փոխանակման կետեր խաղից դուրս վիճակում

Այսօր հանրապետությունում որոշեց առեւտրային բանկերի ստորաբաժանումներ գործում են արտարժույթի փոխանակման մոտ 800 կետեր: Պաղտնիք չէ, որ այդ կետերի մի մասը երբեմն խախտելով սահմանված կարգը, բնակչության սպասարկումը իրականացնում է վերադահումներով, առաջացնելով մարդկանց դժգոհություն: Դա վկայում է, որ բանկերը, լինելով այս գործի պատասխանատու, ոչ պատշաճ մակարդակով են իրականացնում վերահսկողությունը փոխանակման կետերի նկատմամբ:

Կենտրոնական բանկի վերահսկողության, կարգավորման եւ լիցենզավորման գլխավոր վարչությունը անցած շաբաթվա ընթացքում ստուգումներ անցկացրեց 15 բանկերի 24 փոխանակման կետերում:

Ստուգումների արդյունքներով 13 փոխանակման կետեր ենթակա են փակման, որոնցից հինգը կպատժվեն ստուգումները խոչընդոտելու համար, իսկ մնացած ութ կետերում փաստվել են հաշվառումը սահմանված կարգով չիրականացնելու, ինչպես նաեւ մանրադրամով եւ հնամաշ դրամներով գործարքներից հրաժարվելու դեպքեր:

Մի շարք բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու վարույթ է սկսվել՝ վերստուգման ենթակա 7 կետերի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկ անարժանահավատ տվյալներ ներկայացնելու համար: Վերստուգողները խախտում չեն արձանագրել միայն մեկ փոխանակման կետում, իսկ երեք կետեր փակ են եղել:

ՀՀ ԿԲ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Լեռնային Ղարաբաղում ընտրություններն ավելի ժողովրդավարական էին, քան Հայաստանում

Դեկտեմբերի 24-ին ԼՂՀ-ում անցկացված ընտրությունները անցան ոչ միայն բացառիկ ակտիվությամբ, այլեւ օրինականության սահմաններում: Լի նելով Ստեփանակերտի մի շարք ընտրատարածքներում, համոզվեցինք, որ անգամ զինվորականների քվեարկության ժամանակ, ի տարբերություն Հայաստանի, ընտրողները ստանում են ոչ միայն առանձին վիճակներ, այլեւ քվեարկության պահին ոչ մի ապա չէր նայում նրանց քվեաթերթիկներին: Եղավ մի քանի դեպք, երբ ընտանիքի մի անդամ մյուսների փոխարեն լցրեց իր փափագելի դրամներ չունի ներկայացել քվեարկում էր: Ի դեպ, նման դեպքերին անդրադարձավ նաեւ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը նոյեմբերի 25-ին Ստեփանակերտում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նշելով, որ ընտրությունները անցել են առանց լուրջ խախտումների, տեղեկացրեց, որ 2 կամ 3 անձնագրով քվեարկելու դեպքեր եղել են, բայց դրանք զանգվածային բնույթ չեն կրել եւ չէին կարող ազդել վերջնական արդյունքի վրա: Համենայնդեպս, ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ինքն է հաշվի առնի յուրաքանչյուր փոքր խախտում եւ համապատասխան արձագանք տա: ԼՂՀ նախագահի մեջբերելով ԿԸՀ-ի նախագահի հետ իր զրույցը, հայտնեց նաեւ, որ առայժմ մյուս բեկնածուները բողոքներ չեն ներկայացրել: Իսկ միջազգային դիտորդների զրած ակտի մեջ ասվում էր. «Նախագահի բեկնածուների վստահված անձինք, հաղորդավարական նախընտրական կարգով ստեղծված էստաֆետների ներկայացուցիչները նույնպես ունեին հետեւելու քվեարկության ընթացքին, մասնակցելու յուրաքանչյուր ընտրական տեղամասում ձայների հաշվմանը: Քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ձեւակերպման ձայների հաշվման ընթացակարգում դիտորդներ խախտումների փաստեր չեն հայտնաբերել»:

Բացի այդ, ընտրությունների ընթացքում եւ հետո դիտորդների հետ ունեցած զրույցներից տեղեկացանք, որ ընտրությունները անցան այնպիսի հանգստությամբ եւ օրինավորությամբ, որ նրանցից շատերը նույնիսկ զարմացել էին: Դմիտրի Ռոգոզինի կարծիքով, շատ լավ երեւաց, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կարողացավ հանգիստ ապզային տարների շարք: Այն հարցին, թե ի՞նչ կլսան այս ընտրությունները Լեռնային Ղարաբաղին, նա պատասխանեց. «Խաղաղություն, քանի որ բանակցություններին այլեւս կմասնակցի ժողովրդի քվեն ստացած նախագահը»: Անդրադառնալով այս հարցում Ռուսաստանի դերակատարությանը, Դմիտրի Ռոգոզինը հայտնեց, որ այն խրեն չի բախտարարում եւ ՌԴ դեկավարությունը դեմ է հասկանա, որ նաեւ Լեռնային Ղարաբաղում է որոշվում Ռուսաստանի ճակատագիրը: Հետեւաբար, նրա ասելով, դեպքերի զարգացումը հայտնեց, որ ՌԴ դաշտավարը Սերգեյ Միրոնովինը ընտրությունները համարեց ժողովրդավարական:

Եվրախորհրդարանի դաշտվարը անդամ Անդրե Սաբին հայտարարեց, որ բոլոր այն տեղամասերում, որ իրենք եղել են, ընտրությունները օրինական էին:

Ռոբերտ Քոչարյանի ասելով, այս ընտրություններում հրեմ բեկնածուների համար էլ անհամեմատ հաղթանակը այն էր, որ ընտրությունները կայացան, եւ որ դրանց արդյունքները ԼՂՀ դեկավարության չորս տարիների աշխատանքի գնահատականն են:

Թե Հրանտ Մելիքյանը, թե Բորիս Առուբանյանը նույնպես հանգիստ էին վերաբերվում արդյունքներին: «Եթե չընտրվեմ, ի՞նչ կանեմ» հարցին, նրանցից առաջինը պատասխանեց, թե իր համար կարեւոր ԼՂՀ կայացումն է, իսկ երկրորդը ճշեց, որ մեծ ոգեւորության չի լինի:

Ռոբերտ Քոչարյանը մամուլի ասուլիսում հայտնեց, որ հարցնիր նախագահի առաջին գործը պիտի լինի կառավարության կազմումը եւ 1997 թ. բյուջեի նախադասությունների աշխատանքները:

Անվիճելի ընտրությունների ընթացքից ստացած տպավորությունների, կարող ենք ճշել, թե Լեռնային Ղարաբաղում նախագահական ընտրությունները անցան ավելի ազատ, ժողովրդավարական եւ օրինական դայմաններում, քան Հայաստանում: ՀՀ-ի հանրապետական դաշտոնյաները էստ բան ունեն սովորելու դարաբաղցիներից, հատկապես նախընտրական քարոզչության անցկացնելու հարցում:

Ի դեպ, ԼՂՀ ընտրությունների վերաբերյալ Ռոբերտ Քոչարյանին ուղղված շնորհավորական նամակում ԱԺ դաշտվարը Դավիթ Շահնազարյանը նշել է հետեւյալ կարեւոր գնահատականը. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի կամքի արտահայտումը նոյեմբերի 24-ին կայացած ազատ եւ արդար նախագահական ընտրությունների միջոցով ոչ միայն ԼՂՀ այդ ոչ հայության մեծագույն հաղթանակն է. մի անգամ եւս ապացուցվեց, որ Արցախի ժողովրդի միասնական կամքը բոլոր հարցերի կարգավորման կարեւորագույն գրունն է, եւ որ ոչ մի ոք հաղթահարել չի կարող այն հաշվի չառնել»: Նշենք նաեւ, որ գարեւոր, այս գիտակցումը չցուցաբերվեց ՀՀ նախագահի ընտրությունների ժամանակ եւ եթե անհրաժեշտ նաբյուններ ու կեղծիքներ բույլ չտվեին, ապա դրանից չէր օգտվի Ազրբեջանը, եւ միասնության հանդեպ մեզ ասաց չէր տի Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ կապված բանակցությունները:

ՀՈՎՍԵՓ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ,
Ստեփանակերտ-Երեւան

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի վիճակագրական տվյալներին չեն վստահում

ԲԱԿՈՒ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ ԱՐՄԵՆՊՐԵՍ. Համաշխարհային բանկի բանագնացությունը, որը գլխավորում է Մ. Միլզը, 1995 թվականի աշնանից մինչեւ 1996 թվականի գարուն հետազոտություն էր անցկացրել եւ ասաց, որ այն անձանց թիվը, որոնք իրեն ներկայացված նյութերում անհանվում են տեղահանվածներ, կազմում են մոտավորապես 650 հազար կամ երկրի բնակչության 9 տոկոսը: Ինչպես գրել է Բաքվի «Զերկալո» թերթը, դա հաստատվում է նաեւ դաշտոնական տվյալներով, որոնց համաձայն դարաբաղյան հակամարտության հետեւանքով իրենց հողերից հեռացած մարդկանց իրական թիվը 678 հազար է. Սակայն ավելորդ չէ նշել նաեւ, որ Ադրբեջանի դաշտոնական աղբյուրներ մինչեւ էլ բարձրացված ոչնչ են հաստատում 1 միլիոն եւ ավելի զաղթականներ:

Հետաքրքրությունը կազմակերպություններից շատերը դայտարարում են Ադրբեջանի դաշտականներին օժանդակելու իրենց դարձությունը: Ինչպես գրել է նույն «Զերկալո» թերթը, վերջերս ASB գերմանական մարդասիրական կազմակերպությունը ավարտեց դարեւորային օգնությունը Բաքվի մարտավարությամբ բնակվող դաշտականներին բաշխելու իր ծրագիրը: Բացասում նույն ասելն, թե մոտ ժամանակներս Նախագահների կարիքները կդնի ASB-ի նման մեկ այլ կազմակերպություն: Դեպ նրանց եկել է թերթը, գերմանական կազմակերպությունը գերադասել էր իրեր կարգել օգնության ստացողների դաշտականները: Այն վասար ոչ մի ապ չէր դիմել դաշտականներին գրանցող հաշտարարության գործակալությունը: Վերջում է, որ ստանձնական մարդասիրական կազմակերպությունները չեն վստահում դաշտական վիճակագրությանը:

Հետաքրքիր է, որ ... դրոշ

Ադրբեջանցիները բողոքում են բոլոր ասյաններին

«Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության տնօրեն Մարտո Մողոյանն ու աշխատակից Ռուզան Խալաթյանը երկուշաբթի օրը դաշտեցին, թե ինչպես են անդրադարձել Լեռնային Ղարաբաղի նախագահական ընտրություններին միջազգային լրատվական աղբյուրներ եւ ինչ են ասում Հելսինկիի մեկ շաբաթ տեւած անհաջող բանակցությունների մասին վերջուծաբանն ու դիվանագետները:

«Կիրակի օրը Շուշվա փողոցներում դաբաք էին խորվում, ընտրական տեղամասերը տահացնելու համար փայտ վառում, իսկ ընտրողները քվեարկում էին գուռնա-դհոլի նվագի տակ», հայտնում է Ֆրանսդրեսի ներկայացուցիչը: «Բոլոր երկրները նախագահ ունեն, մենք էլ ենք ուզում ունենալ ժողովրդի կողմից ընտրված մեկը», ասել է բրիտանցի տարածքի ընտրական դաշտոնյա Շահեն Միրզոյանը: Ընտրողներից մեկը Կարինե Հարությունյանն ասել է. «Առաջին անգամն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իր նախագահին է ընտրում: Հոգեբանորեն սա շատ կարեւոր է»: Ֆրանսդրեսի բրիտանցիը գրում է. «Շուշին դաշտերազմից լրջորեն տուժել է: Ադրբեջանն այստեղից ռմբակոծում էր Ստեփանակերտը եւ 1992-ին, երբ հայերը վերադարձրեցին Շուշին, այն ամբողջովին ավերված էր: Ադրբեջանցի բնակչության մի մասը փախուստի է դիմել, ոմանք էլ զոհվել են: Նախադատերազմյան 6 հազար բնակիչների փոխարեն հիմա 3600 են եւ նրանք բնակվում են ավերակների հարեւանությամբ: Որդես հայերի հաղթանակի խորհրդանիշ, հիսունհազարանոց ենթադրվում է, մինչեւ ոգնիր դասակ է ուլված: Չնայած 94-ին այստեղ հաղթանակ է հաստատվել, սակայն Ադրբեջանի, հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներն անցյալ շաբաթ Հելսինկյան համաժողովում հաջողության չհասան: Քոչարյանը, որին տարածաշրջանի հայերը համարում են իրենց ազգական հաջողություններ կերտողը, նախազգուշացրել է, որ բանակային գործողությունները կարող են վերսին բարձանալ»: Գործակալությունը հաղորդում է նաեւ, որ Ադրբեջանում Հորդիայի դեսպանը հայտնել է, թե իր երկիրն այս քվեարկությունը համարում է անվավեր ու անօրինական:

AP գործակալությունը հաղորդում է «Անհանգիստ Ադրբեջանից. Ռուսաստանից ու միջազգային հանրության կողմից հնչած բողոքը, հայերի հակողությունն ներո գնելով այս վիճարկելի տարածքում ընտրողները ներկայացան նախագահական ընտրություններին: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւն ուրբաթ օրը դաշտարարեց Լեռնային Ղարաբաղում ընտրությունների անցկացումը ապարդյունաբերելի, որ ինքը չի կարող այն օրինական համարել: «Մենք երբեք չենք ճանաչի այս ընտրությունների արդյունքները եւ դրանք չի ընդունի նաեւ միջազգային հանրությունը», ասաց Ալիեւը, նշելով, որ Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Եվրամիությունը եւ այլ երկրներ դատապարտել են ընտրությունների անցկացումը: Ադրբեջանի Թուրան լրատվական գործակալությունը հաղորդում է, որ մայրաքաղաք Բաքվում զայրացած ցուցարարներ ու Լեռնային Ղարաբաղից փախստականները բաբաք օրը ցույցի դուրս եկան բողոքելով ընտրությունների անցկացման դեմ: Սակայն Հայաստանում բաբերն են ողջունում ընտրությունները», գրում է AP գործակալությունը, վկայակոչելով գրող, նախկին խորհրդային Միության Գերագույն խորհրդի դաշտգավարար Զորի Բալայանին, որը հաստատում է հայտնել, թե քվեարկությունը տարածաշրջանում կայունության հիմք կդառնա:

Միջազգային գործակալությունները, որոնք հաղորդում են Ադրբեջանում տեղի ունեցած ցույցերի մասին տեղեկություններ, վկայակոչում են ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի այս առիթով տարածած տեղեկությունը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակիցներ Սերգեյ Ֆրոլովը եւ Վիկտոր Շուլգինը Բաքվից հաղորդում են, որ բաբաք օրը այստեղ սկսված բողոքի ալիքը կիրակի բարձրանվեց Ադրբեջանի մյուս վայրերում, ներառյալ սահմանային շրջաններ: Հաղորդագրությունը ծանոթում է, որ ոմանք ստիպված են եղել փախչել Մայիբեյլիից, Խոջալուից, Շուշիից եւ մյուս շրջաններից, բողոքում էին ընտրելու իրավունքից զրկվելու դեմ: Ըստ նույն աղբյուրի, փախստականները Ղարաբաղի նախկին բնակչության մեկ երրորդն են: Սյուսները, մոտ 1 միլիոն մարդ, դիմել են բոլոր հնարավոր ազդանշերին, ներառյալ ՍԱԿ-ին եւ ԵԱՀԿ-ին Ղարաբաղի ընտրություններն անօրինական ճանաչելու պնդումով. «Պետք է կանգնեցնել անջատականներին, որոնք ձգտում են ամեն գնով հասնել Ղարաբաղի անկախությանը: Մենք Ադրբեջանի հասնում ոչ մի առաջնորդ չենք ունում: Մենք արդեն ունենք արժանավոր առաջնորդ Հեյդար Ալիեւը: Մենք հաղորդություն ու անդամ ենք ուզում: Մենք ասն վերադարձնելու հնարավորություն ենք դրանցում», հայտարարում են ցուցարարների կազմակերպիչները: Նրանք գտնում են, որ ընտրությունները անօրինական են եւ նորաստեղծ ունեն ամրագրեն Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը հայկական զինուժի կողմից գրավելու իրողությունը: Նրանք գտնում են նաեւ, որ ընտրությունները մարտահրավեր են համաշխարհային հանրության կողմից ընդունված սկզբունքներին: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է նաեւ, որ ցուցարարների շրջանում հատկապես մեծ հուզումներ առաջացրեց տեղական ու միջազգային գործակալությունների տարածած այն փաստը, որ Ստեփանակերտ են մեկնել մի շարք միջազգային դիտորդներ, այդ թվում եւ Ռուսաստանից: Տեղական հեռուստատեսությունը սա մեկնաբանեց որպես Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, նրա ժողովրդին, միջազգային հանրության հոյական սկզբունքներն ու չափանիշները չհարգելու փաստ: Բաքվի մեկնաբանների կարծիքով, այս չմեծված խայթ հակամարտության գոտում կարող է տել լարվածություն: Ադրբեջանի վերլուծաբանները նշում են. «Ադրբեջանի այս հանգիստ, Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Եվրամիությունը եւ այլ երկրներ դատապարտել են ընտրությունների անցկացումը: Ադրբեջանի Թուրան լրատվական գործակալությունը հաղորդում է, որ մայրաքաղաք Բաքվում զայրացած ցուցարարներ ու Լեռնային Ղարաբաղից փախստականները բաբաք օրը ցույցի դուրս եկան բողոքելով ընտրությունների անցկացման դեմ: Սակայն Հայաստանում բաբերն են ողջունում ընտրությունները», գրում է AP գործակալությունը, վկայակոչելով գրող, նախկին խորհրդային Միության Գերագույն խորհրդի դաշտգավարար Զորի Բալայանին, որը հաստատում է հայտնել, թե քվեարկությունը տարածաշրջանում կայունության հիմք կդառնա:

Միջազգային գործակալությունները, որոնք հաղորդում են Ադրբեջանում տեղի ունեցած ցույցերի մասին տեղեկություններ, վկայակոչում են ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի այս առիթով տարածած տեղեկությունը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակիցներ Սերգեյ Ֆրոլովը եւ Վիկտոր Շուլգինը Բաքվից հաղորդում են, որ բաբաք օրը այստեղ սկսված բողոքի ալիքը կիրակի բարձրանվեց Ադրբեջանի մյուս վայրերում, ներառյալ սահմանային շրջաններ: Հաղորդագրությունը ծանոթում է, որ ոմանք ստիպված են եղել փախչել Մայիբեյլիից, Խոջալուից, Շուշիից եւ մյուս շրջաններից, բողոքում էին ընտրելու իրավունքից զրկվելու դեմ: Ըստ նույն աղբյուրի, փախստականները Ղարաբաղի նախկին բնակչության մեկ երրորդն են: Սյուսները, մոտ 1 միլիոն մարդ, դիմել են բոլոր հնարավոր ազդանշերին, ներառյալ ՍԱԿ-ին եւ ԵԱՀԿ-ին Ղարաբաղի ընտրություններն անօրինական ճանաչելու պնդումով. «Պետք է կանգնեցնել անջատականներին, որոնք ձգտում են ամեն գնով հասնել Ղարաբաղի անկախությանը: Մենք Ադրբեջանի հասնում ոչ մի առաջնորդ չենք ունում: Մենք արդեն ունենք արժանավոր առաջնորդ Հեյդար Ալիեւը: Մենք հաղորդություն ու անդամ ենք ուզում: Մենք ասն վերադարձնելու հնարավորություն ենք դրանցում», հայտարարում են ցուցարարների կազմակերպիչները: Նրանք գտնում են, որ ընտրությունները անօրինական են եւ նորաստեղծ ունեն ամրագրեն Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը հայկական զինուժի կողմից գրավելու իրողությունը: Նրանք գտնում են նաեւ, որ ընտրությունները մարտահրավեր են համաշխարհային հանրության կողմից ընդունված սկզբունքներին: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է նաեւ, որ ցուցարարների շրջանում հատկապես մեծ հուզումներ առաջացրեց տեղական ու միջազգային գործակալությունների տարածած այն փաստը, որ Ստեփանակերտ են մեկնել մի շարք միջազգային դիտորդներ, այդ թվում եւ Ռուսաստանից: Տեղական հեռուստատեսությունը սա մեկնաբանեց որպես Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, նրա ժողովրդին, միջազգային հանրության հոյական սկզբունքներն ու չափանիշները չհարգելու փաստ: Բաքվի մեկնաբանների կարծիքով, այս չմեծված խայթ հակամարտության գոտում կարող է տել լարվածություն: Ադրբեջանի վերլուծաբանները նշում են. «Ադրբեջանի այս հանգիստ, Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Եվրամիությունը եւ այլ երկրներ դատապարտել են ընտրությունների անցկացումը: Ադրբեջանի Թուրան լրատվական գործակալությունը հաղորդում է

ԱԶԳ

ՀԲԸՄ համագումար

Լուիզ Մանուկյան Սիմոն. «Այն, ինչ լավ է Սփյուռքի համար, լավ է Հայաստանի համար, եւ ընդհակառակը»

Հայկական բարեգործական ընդհանուր միության 79-րդ համագումարում որ կայացավ նոյեմբերի 16-ին Փասադենայում (ԱՄՆ, Կալիֆոռնիա) եւ որի մասին գրել էինք արդեն, միության երկամյա գործունեության մասին զեկուցումով հանդես էր եկել նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը: Թարգմանաբար ընթերցողին ենք ներկայացնում զեկուցման գլխավոր մասերը:

Շնորհիվ Պողոս Փաշայի, Ալեք Մանուկյանի եւ բոլոր մյուս առաջնորդների Միջին Արեւելքում եւ արեւմտյան ափխարհում, այս ամբողջ դարաշրջանում իր բոլոր բարդություններով հանդերձ, մենք այսօր ունենք հաստատված, ուժեղ Սփյուռք եւ մի եզակի միջազգային կազմակերպություն:

Վերլուծելով ՀԲԸՄ-ի հաջողությունների 90 տարիները, մենք հասկանում ենք, որ այն կարելի է դիտարկել ըստ երեք հիմնական փուլերի, որոնցից յուրաքանչյուրը տեւել է 30-40 տարի եւ որին հաջորդել է նոր սերունդ իրագործելու համար իր նպատակները: Առաջին շրջանը սկսվել է 1910 թ.-ին, երբ ՀԲԸՄ-ը ձեռնարկեց իր առաջին ծրագրերը հայկական գյուղերում եւ շարունակեց հետագա 30 տարիների ընթացքում, մինչ կազմակերպությունը կենտրոնացրել էր իր բոլոր միջոցները ողջ ափխարհով, որոնցից փայփայի եւ կրթի եղեռնի հարյուր հազարավոր զոհերին: Երկրորդ փուլն սկսվեց երկրորդ ափխարհամարտից հետո, երբ հաջորդող 40 տարիների ընթացքում 17 երկրներում ՀԲԸՄ-ը ծրագրավորեց եւ իրագործեց 50 դպրոցների եւ կենտրոնների հիմնում, զուգորդված անհամար ժողովրդային եւ կրթական ծրագրերի հետ: Սրա սկսվեց երրորդ փուլը, անկախ մեր իմացության, Հայաստանում ավերիչ երկրաշարժով: Երբ 1991 անկախություն հայտարարվեց, հայի մեր կյանքը ընդմիշտ փոխվեց: Որոշ միջավայրերում, հենց որ նման միտք եւ արտահայտում, անմոլորման մեկն ու մեկն ինձ ասում է. «Լուիզ, մի մոռացիր Սփյուռքը»: Իմ դասախոսությունը միշտ նույնն է, այն, ինչ լավ է Սփյուռքի համար, եւ հակառակը: Մենք միասնական ճակատ ենք հայերի համար:

